

«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ
Հարցաշար - 8-րդ դասարան - 120 րոպե

N 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Քանի՞ գրքերից է բաղկացած Հին Կտակարանը: (0,5 միավոր)

- 1) 49 2) 39 3) 27 4) 48

2. Ի՞նչ է նշանակում Բարեկենդան: (0,5 միավոր)

- 1) Մխիթարություն 2) Արդարություն
3) Ուրախություն 4) Պահեցողություն

3. Ո՞վ Վանի թագավորության բոլոր աստվածների անունները փորագրել տվեց Միերի դուռ կոչվող ժայռի վրա: (0,5 միավոր)

- 1) Իշպուրիսի 2) Արգիշտի I
3) Արտաշես I 4) Ռուսա II

4. Ո՞ր կաթոլիկոսն Անիում ձեռնարկեց Ս. Հռիփսիմյանց կույսերին նվիրված եկեղեցու կառուցումը: (0,5 միավոր)

- 1) Խաչիկ Արշարունի 2) Սարգիս Սևանցի
3) Պետրոս Գետադարձ 4) Անանիա Մոկացի

5. Ո՞ւմ քարոզների շնորհիվ քրիստոնյա դարձավ Ս. Սանդուխտ արքայադուստրը: (0,5 միավոր)

- 1) Ս. Բարդուղիմեոս 2) Ս. Գրիգոր Լուսավորիչ
3) Ս. Թադեոս 4) Ս. Արիստակես հայրապետ

6. Ո՞ր թվականին Հովհաննես Դրասխանակերտցին կաթոլիկոսական աթոռը տեղափոխեց Աղթամար: (0,5 միավոր)

- 1) 927 թ. 2) 937 թ. 3) 947 թ. 4) 917 թ.

7. Ի՞նչ է նշանակում մաքսավոր: (0,5 միավոր)

- 1) Մեղավոր 2) Ներված
3) Գոռոզամիտ 4) Հարկահավաք

8. Ինչո՞վ է կատարվում դրոշմի խորհուրդը: (0,5 միավոր)

- 1) Ջրով 2) Մեռոնով (Մյուռոնով)
3) Գինով 4) Նարոտով

N9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Հայոց եկեղեցին տարվա օրերը բաժանել է 3 հիմնական խմբերի՝ _____, սրբերի հիշատակության, _____:

(1 միավոր)

10. Անիի պարսպի ավագ դռան վրա դրոշմված է _____ զինանշանը:
(1 միավոր)

11. Գագիկ Ա.-ի հիմնադրած Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճարը VII դարում կառուցված
_____ կրկնօրինակությունն էր:
(1 միավոր)

12. Ս. Սահակ Պարթև կաթողիկոսը թաղվել է _____ Աշտիշատ գյուղում:
(1 միավոր)

N 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը՝ 4 փաստից

13. Թեմերը համապատասխանեցնել առաջնորդանիստ եկեղեցիներին: (1 միավոր)

1. Արագածոտնի թեմ	ա. Յոթ վերք Ս. Աստվածածին	1	
2. Տավուշի թեմ	բ. Ս. Գրիգոր Նարեկացի	2	
3. Շիրակի թեմ	գ. Ս. Գրիգոր Լուսավորիչ	3	
4. Գուգարաց թեմ	դ. Ս. Մեսրոպ Մաշտոց	4	
	ե. Ս. Ներսես Շնորհալի		

14. Ժողովները համապատասխանեցնել գահակալների անուններին: (1 միավոր)

1. Աշտիշատի ժողով	ա. Ս. Հովսեփ Ա. Հոդոցմեցի	1	
2. Դվինի առաջին եկեղեցական ժողով	բ. Ս. Ներսես Մեծ	2	
3. Շահապիվանի ժողով	գ. Ներսես Բ. Բագրևանդցի	3	
4. Դվինի երկրորդ եկեղեցական ժողով	դ. Մովսես Բ. Եղիվարդեցի	4	
	ե. Բաբկեն Ա. Ոթմեցի		

N 15-16

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը՝ 5 փաստից

15. Տոները դասավորել ըստ դրանց տոնման հաջորդականության:

(1 միավոր)

ա. Համբարձում	1	
բ. Ծաղկազարդ	2	
գ. Ս. Սարգիս	3	
դ. Խաչվերաց	4	
ե. Բուն Բարեկենդան	5	

16. Գահակալները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության:
(1 միավոր)

ա. Գևորգ Բ. Գառնեցի	1	
բ. Անանիա Ա. Մոկացի	2	
գ. Մովսես Բ. Եղիվարդեցի	3	
դ. Հովհաննես Գ. Օձնեցի	4	
ե. Զաքարիա Ա. Զագեցի	5	

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

17. Կարդալ և պատասխանել հարցերին:

ՏՃգնության մեջ հոգին ավանդած Ս. Գրիգոր Լուսավորչին գտնում են Մանյա քարայրի մոտ՝ գիհի ծառի փչակում: Ս. Տրդատ թագավորը նրա գերեզմանի կառուցման համար տալիս է իր համար շատ թանկագին սուրբ, որը ստացել էր Կոստանդիանոս կայսրից: Այդ սուրբ կոչվում էր «**հավլունի**»

1) Ո՞ւմ գրչին են պատկանում այս տողերը: (1 միավոր)

2) Ո՞ր աշխատությունից են մեջբերված: (1 միավոր)

N 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ: (2 միավոր)

- 1) Չնայած հայերի համառ դիմադրությանը՝ բյուզանդացիները 1048 թ. գրավում են Անի մայրաքաղաքը:
- 2) Աշոտ Երկաթից հետո գահ է բարձրանում Սմբատ II Բագրատունին:
- 3) Անանիա Մոկացին վերականգնում է բնականոն հարաբերությունները Ադվանից կաթողիկոսության հետ:
- 4) Պավլիկյանները ընունում էին, որ Քրիստոս ծնվել է Մարիամ Աստվածածնից, այսինքն՝ ընդունում էին նրա մարդկային էությունը:
- 5) Հայոց եկեղեցու որևէ ներկայացուցիչ Քաղկեդոնի ժողովին չի մասնակցել:

--	--

19. Թվարկված կաթողիկոսներից ո՞ր երկուսը չեն գահակալել 5-րդ դարում: (2 միավոր)

- 1) Ս. Գյուտ Ա. Արահեզացի
- 2) Ներսես Բ. Բագրևանդցի
- 3) Ս. Հովսեփ Ա. Հոդոցմեցի
- 4) Ս. Հովհաննես Ա. Մանդակունի
- 5) Մովսես Բ. Եղիվարդեցի

--	--

20. Շարադրանք:

(2 միավոր)

Սուրբ Հարություն կամ Ջատիկ (ներկայացրեք տոնի իմաստը և տոնակատարությունը):